



## ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### ՈՐՈՇՈՒՄ

14 մայիսի 2019 թվականի թիվ 49-Ա  
ք. Երևան

#### «ՅՈՒՔՈՄ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՈՉ ՍԵՓԱԿԱՆ ՀԵՌՈՒՍՏԱԾՐԱԳՐԵՐ ՎԵՐԱՀԵՌԱՐՁԱԿԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի և 52-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով «ՅՈՒՔՈՄ» ՍՊ ընկերության ոչ սեփական հեռուստածրագրեր վերահեռարձակելու թույլտվություն ստանալու մասին 2019 թվականի ապրիլի 30-ի դիմումը՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը **որոշեց.**

1. Բավարարել «ՅՈՒՔՈՄ» ՍՊ ընկերության դիմումը և տալ ոչ սեփական հեռուստածրագրեր վերահեռարձակելու թույլտվություն՝ հեռուստածրագրերի վերահեռարձակման իրավունքը հավաստող փաստաթղթի գործողության ժամկետով՝ համաձայն Հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

Տ. ՀԱԿՈԲՅԱՆ

Հավելված  
Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի  
2019 թվականի մայիսի 14-ի թիվ 49-Ս որոշման

<b>Հեռուստադրագրի անվանումը</b>	<b>Թույլտվության ժամկետի ավարտը</b>
«ТНТ- Comedy» «ТНТ4 International» «Пятница Internatioal»	31.03.2021թ.